

Արձանագրություն

«Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադիր պետություններ հանդիսացող Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր՝

«Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրի 6-րդ հոդվածին համապատասխան՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2015 թվականի հունիսի 15-ի պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության խմբագրությամբ,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Պայմանագրում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1. 1-ին հոդվածի առաջին պարբերության մեջ «ազգային տնտեսությունների կողմից համաշխարհային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի բացասական հետեւանքները հաղթահարելու, դրանց տնտեսական եւ ֆինանսական կայունությունն ապահովելու, ինչպես նաեւ Հիմնադրամի մասնակից պետությունների տնտեսությունների ինտեգրման հետագա խորացմանն աջակցելու» բառերը փոխարինել «Հիմնադրամի մասնակից պետություններում տնտեսական եւ ֆինանսական կայունությանն աջակցելու, ինչպես նաեւ դրանց կայուն զարգացմանն օժանդակելու» բառերով:

2. Պայմանագրի տեքստում «Հիմնադրամի մասին հիմնադրույթ» բառերը փոխարինել «Հիմնադրամի կանոնադրություն» բառերով՝ համապատասխան հոլովներով:

3. 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը լրացնել «եւ դրա անբաժանելի մասը» բառերով:

4. 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածները հանել:

5. 5-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Ուժի մեջ մտնելուց հետո սույն Պայմանագիրը բաց է այլ պետությունների միանալու համար՝ նրանց կողմից Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված պահանջները եւ ընթացակարգերը կատարելու պայմանով:»:

6. 5-րդ հոդվածի երկրորդ պարբերության մեջ «եւ միջազգային կազմակերպությունների» բառերը հանել:

7. Պայմանագրի՝ «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի մասին հիմնադրույթ» հավելվածը փոխարինել «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի կանոնադրություն» հավելվածով՝ սույն արձանագրությանը կից ներկայացվող խմբագրությամբ:

8. 7-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն Պայմանագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարածայնությունները կարգավորվում են Հիմնադրամի մասնակից պետությունների միջև խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով: Սույն Պայմանագրի կիրառման հետ կապված եւ Հիմնադրամի գործունեության ընթացքում ծագող վեճերը կարգավորվում են Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:»:

Հոդված 2

1. Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամը (այսուհետ՝ ԿԶԵՀ), որպես Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչ գործողություններ իրականացնելիս, Եվրասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Կառավարիչ) կողմից ընդունված կամ ձեռք բերված իրավունքների, պարտավորությունների, ակտիվների եւ այլ գույքի լիիրավ իրավահաջորդն է՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2015 թվականի հունիսի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության խմբագրությամբ՝ Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադիր պետությունների եւ Եվրասիական զարգացման բանկի միջև 2009 թվականի հունիսի 9-ին ստորագրված «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ «Կառավարման մասին» համաձայնագիր) հիման վրա:

2. Սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարիչների խորհրդի նախագահը Կառավարչին է ուղարկում «Կառավարման մասին» համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին ծանուցում՝

«Կառավարման մասին» համաձայնագրի 9-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան:

3. Միջոցների եւ ակտիվների փոխանցումը, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ձեւակերպվում է իրավունքների, պարտավորությունների, ակտիվների եւ այլ գույքի, այդ թվում՝ «Կառավարման մասին» համաձայնագրի կատարման շրջանակներում Կառավարչի կողմից ձեւակերպված արխիվների եւ փաստաթղթերի փոխանցման մասին փոխանցման ակտը (այսուհետ՝ փոխանցման ակտ) ԿԶԵՀ-ի եւ Կառավարչի միջեւ ստորագրելու միջոցով:

4. Փոխանցման ակտն ստորագրելուց հետո, սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան, Կառավարիչների խորհրդի նախագահը «Կառավարման մասին» համաձայնագրի ավանդապահին է ուղարկում դրա գործողությունը դադարեցնելու ամսաթվի մասին ծանուցում՝ «Կառավարման մասին» համաձայնագրի 9-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան:

Հոդված 3

1. Սույն արձանագրությունը Կողմերը ժամանակավորապես կիրառում են ստորագրման օրվանից 30 օր հետո՝ բացառությամբ այն Կողմի, որն իր նկատմամբ տվյալ դրույթը չկիրառելու մասին վերապահում է կատարել: Սույն արձանագրության վերաբերյալ այլ վերապահումներ չեն թույլատրվում:

2. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը արձանագրությունն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

3. Սույն արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված հարցերը կարգավորվում են Պայմանագրի 7-րդ հոդվածին համապատասխան:

4. Սույն արձանագրության ավանդապահի գործառույթները կատարում է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունը:

Կատարված է 2024 թվականի հունիսի «26»-ին ք. Աստանայում, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն արձանագրության բնօրինակը պահվում է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունում, որը սույն արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր Կողմի կուղարկի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության կողմից՝	Ղազախստանի Հանրապետության կողմից՝	Ղրղզստանի Հանրապետության կողմից՝
Ռուսաստանի Դաշնության կողմից՝	Տաջիկստանի Հանրապետության կողմից՝	Հայաստանի Հանրապետության կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ

«Կայունացման և զարգացման եվրասիական Հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության առնչությամբ

Հայաստանի Հանրապետությունը սույն Արձանագրությունը կկիրառի մինչև սույն Արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն դրա ուժի մեջ մտնելը միայն Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխան ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցման օրվանից:

Հայաստանի Հանրապետության Վարչապետ /ստորագրություն/ Ն. Վ. Փաշինյան

Հավելված

«Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» 2024թ. հունիսի 26-ի արձանագրության

«Հավելված Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրի (խմբագրված 2024թ. հունիսի 26-ի արձանագրությամբ)

Կանոնադրություն

Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի

Սույն կանոնադրությունը «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ին ստորագրված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասն է:

**Գլուխ 1. ԿԶԵՀ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ, ԿԶԵՀ) միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միջազգային կազմակերպություն է, իր գործունեությունը կազմակերպում եւ իրականացնում է Պայմանագրին եւ սույն կանոնադրությանը (այսուհետ՝ Կանոնադրություն) համապատասխան:

2. ԿԶԵՀ-ն իր գործունեությունն իրականացնում է՝ առանց վնաս հասցնելու Հիմնադրամի մասնակից պետությունների ինքնիշխանությանը՝ դրանց կողմից սեփական ազգային տնտեսությունների կառավարման հարցերում: ԿԶԵՀ-ը Հիմնադրամի յուրաքանչյուր մասնակից պետության նկատմամբ արդար վերաբերմունք է ապահովում Պայմանագրի, սույն Կանոնադրության եւ ԿԶԵՀ մարմինների կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա:

3. Իր գործունեությունն իրականացնելիս ԿԶԵՀ-ն առաջնորդվում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով, կիրառելի միջազգային պայմանագրերով, Պայմանագրով եւ սույն Կանոնադրությամբ: ԿԶԵՀ-ն իր գործառույթների կատարումն ապահովելու համար Հիմնադրամի մասնակից պետությունների կառավարությունների հետ կարող է կնքել դրանց տարածքում ԿԶԵՀ-ի գտնվելու պայմանների մասին համաձայնագրեր, ինչպես նաեւ Հիմնադրամի մասնակից պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի եւ այլ լիազորված մարմինների հետ համաձայնագրեր: Հիմնադրամի մասնակից պետությունների օրենսդրությունների այն դրույթները, որոնցով սահմանվում է կազմակերպությունների ստեղծման, լիցենզավորման, գործունեության կանոնակարգման եւ դադարեցման կարգը, ԿԶԵՀ-ի վրա չեն տարածվում:

4. ԿԶԵՀ-ի լրիվ անվանումը՝

«Евразийский фонд стабилизации и развития»՝ ռուսերենով,

«Eurasian Fund for Stabilization and Development»՝ անգլերենով:

5. ԿԶԵՀ-ի կրճատ անվանումը՝

«EΦCP»՝ ռուսերենով,

«EFSD»՝ անգլերենով:

6. ԿԶԵՀ-ի գլխավոր գրասենյակը գտնվում է Աստանա քաղաքում, Ղազախստանի Հանրապետություն:

7. ԿԶԵՀ-ը կարող է Հիմնադրամի մասնակից պետություններում ներկայացուցչություններ բացել ԿԶԵՀ-ի կառավարիչների խորհրդի որոշմամբ:

Հոդված 2. Նպատակը եւ գործառույթները

1. ԿԶԵՀ-ը հիմնադրվել է Հիմնադրամի մասնակից պետություններում տնտեսական եւ ֆինանսական կայունությանն աջակցելու, ինչպես նաեւ դրանց կայուն զարգացմանն օժանդակելու նպատակով:

2. Իր նպատակի իրագործման համար ԿԶԵՀ-ը կատարում է հետեւյալ գործառույթները՝

1) կուտակում է միջոցներ՝ ներառյալ կապիտալում կատարված ներդրումների տեսքով ստացված միջոցները.

2) տնօրինում է կուտակված միջոցները.

3) կառավարում է այն հիմնադրամները, որոնք ԿԶԵՀ-ի նպատակով ձեւավորվել են Հիմնադրամի մասնակից պետությունների, ինչպես նաեւ Պայմանագրի մասնակից չհանդիսացող պետությունների եւ այլ կազմակերպությունների կողմից.

4) մատուցում է խորհրդատվական եւ վերլուծական ծառայություններ.

5) փոխգործակցում է Հիմնադրամի մասնակից պետությունների եւ այլ երկրների իշխանության մարմինների, միջազգային եւ այլ կազմակերպությունների, ազգային հաստատությունների եւ տնտեսավարող սուբյեկտների հետ այնպիսի ձեւով, որը ԿԶԵՀ-ը կհամարի իր նպատակի իրագործման համար առավել

ընդունելի եւ նպատակահարմար.

6) իրականացնում է գործունեության այլ տեսակներ եւ մատուցում է այլ ծառայություններ, որոնք չեն հակասում Պայմանագրով եւ սույն Կանոնադրությամբ, Հիմնադրամի մասնակից պետությունների հետ ԿԶԵՀ-ի կողմից կնքված երկկողմ համաձայնագրերով սահմանված՝ ԿԶԵՀ-ի նպատակին:

3. ԿԶԵՀ-ը չպետք է կառավարման ընդունի այնպիսի հիմնադրամներ, ստանալ փոխառություններ կամ աջակցության այլ ձեւ, որոնք կարող են որեւէ կերպ սահմանափակել ԿԶԵՀ-ի նպատակի եւ գործառույթների իրագործումը, հանգեցնել դրանցից շեղմանը կամ այլ կերպ փոխել դրանք:

Հոդված 3. ԿԶԵՀ-ի հիմնադիրները եւ մասնակիցները

1. ԿԶԵՀ-ի հիմնադիրներն են Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ԿԶԵՀ-ի հիմնադիր պետություններ):

2. ԿԶԵՀ-ի հիմնադիր պետությունները դրա մասնակիցներն են:

3. Հիմնադրամը բաց է ԿԶԵՀ-ի հիմնադրման նպատակը կիսող այլ պետությունների մասնակցության համար:

4. Հիմնադրամին միանալ ցանկացող պետությունը Կառավարիչների խորհուրդ է ներկայացնում պաշտոնական դիմում՝ նշելով, որ ինքը կիսում է ԿԶԵՀ-ի հիմնադրման նպատակը եւ Պայմանագրին է միանում Պայմանագրի 5-րդ հոդվածին համապատասխան:

Հիմնադրամ ընդունվող պետությունը ԿԶԵՀ-ի մասնակից է դառնում Կառավարիչների խորհրդի՝ սույն Կանոնադրությանը համապատասխան ընդունված որոշման հիման վրա՝ Պայմանագրին միանալուց հետո եւ Կառավարիչների խորհրդի կողմից սահմանված կարգով վճարումը կատարելուց

հետո:

Կառավարիչների խորհրդի՝ Հիմնադրամ նոր պետություն ընդունելու մասին որոշման պատշաճ կերպով հաստատված պատճենն ուղարկվում է այդ պետությանը եւ Պայմանագրի ավանդապահին: Միանալու մասին փաստաթղթի հետ միասին նշված փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից նոր պետությունը համարվում է Պայմանագրին միացած եւ որպես Հիմնադրամի մասնակից ընդունված, ինչի մասին ավանդապահը ծանուցում է Հիմնադրամի մյուս մասնակից պետություններին եւ Հիմնադրամին:

Գլուխ 2. ԿԶԵՀ-Ի ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հոդված 4. Հիմնադրամի ռեսուրսները

1. Սույն Կանոնադրության նպատակներով ԿԶԵՀ-ի ռեսուրսներն են՝
 - 1) Հիմնադրամի մասնակից պետությունների ներդրումները,
 - 2) ԿԶԵՀ-ի ռեսուրսների հաշվին ֆինանսավորման տրամադրումից ստացված մուտքերը,
 - 3) ԿԶԵՀ-ի ժամանակավորապես ազատ միջոցների տեղաբաշխումից (ներդրումից) ստացված մուտքերը,
 - 4) ԿԶԵՀ-ին կատարվող նվիրատվությունները,
 - 5) ԿԶԵՀ-ի կողմից իր գործունեության շրջանակներում ստացած ցանկացած այլ միջոց՝ բացառությամբ հատուկ հիմնադրամների միջոցների, որոնք ԿԶԵՀ-ի կառավարմանն են հանձնվել սույն Կանոնադրությանը համապատասխան:

Հոդված 5. Հիմնադրամին կատարվող նվիրատվությունները

1. Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ Հիմնադրամի ցանկացած մասնակից պետությունից, շահագրգիռ պետությունից կամ կազմակերպությունից անհատույց եւ անվերադարձ հիմունքով ԿԶԵՀ են ընդունվում դրամական միջոցներ (նվիրատվություններ)՝ դրանք Հիմնադրամի նպատակների համար օգտագործելու համար:

2. ԿԶԵՀ-ին դրամական միջոցների հատկացումը նվիրատվության ձեռով նշանակում է նվիրատուի համաձայնությունը՝ նշված միջոցները ԿԶԵՀ-ի քաղաքականություններին, կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան օգտագործելուն:

3. Հիմնադրամի մասնակից պետություն չհանդիսացող նվիրատուն Հիմնադրամի մասնակից չի դառնում եւ չի մասնակցում ԿԶԵՀ-ի միջոցների կառավարմանը:

4. Որպես նվիրատվություններ ԿԶԵՀ-ին հատկացված միջոցները եւ նշված միջոցների տեղաբաշխումից (ներդրումից) եւ տրամադրումից ստացված եկամուտները հաշվի չեն առնվում Հիմնադրամի մասնակից պետության մասնաբաժինը որոշելիս եւ Հիմնադրամի մասնակից պետությունների կազմից իր դուրս գալու մասին հայտարարած՝ Հիմնադրամի մասնակից պետությանը չեն վճարվում՝ մինչեւ Հիմնադրամի գործառնությունների դադարեցումը:

Հոդված 6. Պահուստային եւ այլ հիմնադրամներ

1. Կառավարիչների խորհուրդը ձեւավորում է՝

1) Հիմնադրամի շահույթից մասհանումների հաշվին՝ պահուստային հիմնադրամ,

2) անհրաժեշտության դեպքում՝ այլ հիմնադրամներ:

2. Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ ԿԶԵՀ-ը կարող է ձեւավորել

հիմնադրամներ եւ կառավարել դրանց միջոցները՝ ներառյալ հավատարմագրային կառավարման հանձնված հատուկ հիմնադրամները՝ պայմանով, որ այդ հիմնադրամները համապատասխանում են ԿԶԵՀ-ի նպատակին եւ գործառույթներին: Հատուկ հիմնադրամների կառավարման գծով բոլոր ծախսերն իրականացվում են այդ հիմնադրամների հաշվին:

Հոդված 7. Ժամանակավորապես ազատ դրամական միջոցների տեղաբաշխումը (ներդրումը)

Ժամանակավորապես ազատ միջոցների տեղաբաշխումը (ներդրումը) իրականացվում է Կառավարիչների խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան:

Գլուխ 3. ԿԱՊԻՏԱԼԸ

Հոդված 8. ԿԶԵՀ-ի կապիտալը

1. ԿԶԵՀ-ի կապիտալը կազմած է ԿԶԵՀ-ի հիմնադիր պետությունների սկզբնական ներդրումներից, այն ներդրումների գումարների հանրագումարից, որոնք ԿԶԵՀ-ի յուրաքանչյուր մասնակից պետության կողմից վճարվել են կամ ենթակա են վճարման՝ ԿԶԵՀ-ում այդ պետությունների մասնակցությանը համապատասխան ստանձնած պարտավորությունների շրջանակներում (այսուհետ՝ ներդրում):

2. ԿԶԵՀ-ի կապիտալում կատարվող ներդրումները՝

1) նոմինացվում են ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորով (այսուհետ՝ ԿԶԵՀ-ի հաշվարկային միավոր) կամ Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ այլ արժույթով: Ներդրումների հաշվառման նպատակով ընդունվում է, որ ԿԶԵՀ-ի մեկ հաշվարկային միավորի կառուցվածքի 100 (հարյուր) %-ը կազմում է 1 (մեկ) ԱՄՆ դոլար: ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորի կառուցվածքը, դրա արժեքը եւ

հաշվարկման կարգը վերանայվում եւ հաստատվում են Կառավարիչների խորհրդի որոշմամբ:

2) վճարվում են Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝

- ԿԶԵՀ-ի հիմնադիր պետությունների ազգային արժույթներով, ԱՄՆ դոլարով, եվրոյով կամ այլ արժույթներով.

- ԿԶԵՀ-ի հիմնադիր պետությունների ազգային արժույթներով, ԱՄՆ դոլարով, եվրոյով կամ այլ արժույթներով հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակների թողարկման միջոցով, որոնք ենթակա են նոմինալ արժեքով մարման՝ ըստ պահանջի:

ԿԶԵՀ-ն այդ պահանջները ներկայացնում է ըստ անհրաժեշտության՝ Կառավարիչների խորհրդի որոշմամբ:

3. ԿԶԵՀ-ի հիմնադիր պետությունների սկզբնական ներդրումների չափը կազմում է՝

- Հայաստանի Հանրապետություն՝ 1 (մեկ) միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք, որից՝

- 100 (հարյուր) հազար ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով,

- 900 (ինը հարյուր) հազար ԱՄՆ դոլարը վճարվել է ամբողջությամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով.

- Բելառուսի Հանրապետություն՝ 10 (տասը) միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք, որից՝

- 1 (մեկ) միլիոն ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով,

- 9 (ինը) միլիոն ԱՄՆ դոլարը վճարվել է 1 (մեկ) միլիոն ԱՄՆ դոլարի չափով մասամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով.

- Ղազախստանի Հանրապետություն՝ 1 (մեկ) միլիարդ ԱՄՆ դոլարին

համարժեք, որից՝

- 100 (հարյուր) միլիոն ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով,
- 900 (ինը հարյուր) միլիոն ԱՄՆ դոլարը վճարվել է 396 (երեք հարյուր իննսունվեց) միլիոն 800 (ութ հարյուր) հազար ԱՄՆ դոլարի չափով մասամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով.

Դրոզստանի Հանրապետություն՝ 1 (մեկ) միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք, որից՝

- 100 (հարյուր) հազար ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով,
- 900 (ինը հարյուր) հազար ԱՄՆ դոլարը վճարվել է 100 (հարյուր) հազար ԱՄՆ դոլարի չափով մասամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով.

Ռուսաստանի Դաշնություն՝ 7,5 (յոթ ու կես) միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք, որից՝

- 750 (յոթ հարյուր հիսուն) միլիոն ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով,
- 6 (վեց) միլիարդ 750 (յոթ հարյուր հիսուն) միլիոն ԱՄՆ դոլարը վճարվել է 1 (մեկ) միլիարդ 808 (ութ հարյուր ութ) միլիոն ԱՄՆ դոլարի չափով մասամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով.

Տաջիկստանի Հանրապետություն՝ 1 (մեկ) միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք, որից՝

- 100 (հարյուր) հազար ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով,
- 900 (ինը հարյուր) հազար ԱՄՆ դոլարը վճարվել է ամբողջությամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով:

4. ԿԶԵՀ-ում Հիմնադրամի մասնակից պետությունների մասնաբաժինները, ինչպես նաեւ ԿԶԵՀ-ում Հիմնադրամի մասնակից

պետությունների իրավունքները չեն կարող լինել գրավի կամ որեւէ այլ ծանրաբեռնվածության առարկա, դրանք չեն կարող հարկադիր կարգով առգրավվել կամ արգելանքի տակ դրվել եւ չեն կարող որեւէ մեկի փոխանցվել: ԿԶԵՀ-ը պատասխանատու չէ Հիմնադրամի մասնակից պետությունների պարտավորությունների համար:

Հոդված 9. Կապիտալի փոփոխումը

1. ԿԶԵՀ-ի կապիտալը ենթակա է ավելացման Հիմնադրամին նոր պետության միանալու դեպքում: ԿԶԵՀ-ի կապիտալում Հիմնադրամի նոր մասնակից պետության սկզբնական ներդրման չափը, դրա վճարման կարգը եւ ժամկետները որոշվում են Կառավարիչների խորհրդի կողմից՝ Հիմնադրամի համապատասխան նոր մասնակից պետության հետ համաձայնեցմամբ:

2. ԿԶԵՀ-ում կատարվող սկզբնական ներդրման նվազագույն գումարը Կառավարիչների խորհրդի կողմից չփոփոխվելու դեպքում կազմում է ԿԶԵՀ-ի 1,000,000 (մեկ միլիոն) հաշվարկային միավորին համարժեք:

3. Հիմնադրամի ցանկացած մասնակից պետություն իրավունք ունի ցանկացած ժամանակ Կառավարիչների խորհուրդ ներկայացնելու առաջարկություններ՝ ԿԶԵՀ-ում սեփական ներդրման ընդհանուր գումարի ավելացման վերաբերյալ: Ավելացման կարգը եւ պայմանները, այդ թվում՝ վճարման արժույթը եւ ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորի նկատմամբ դա որոշելու կարգը ենթակա են Կառավարիչների խորհրդի հաստատմանը: Հիմնադրամի մասնակից պետության ներդրման ավելացումը, ինչպես նաեւ այդ ավելացման հետ կապված Հիմնադրամի մասնակից պետության մոտ ծագող իրավունքները եւ պարտականություններն իրականացվում են ԿԶԵՀ-ի ներքին նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

4. ԿԶԵՀ-ի կապիտալը կարող է ավելացվել Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ Հիմնադրամի մասնակից պետությունների կողմից լրացուցիչ

բաժանորդագրությամբ լրացուցիչ ներդրումների կատարման հաշվին՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգին համապատասխան:

5. Լրացուցիչ բաժանորդագրությամբ կապիտալի ավելացման դեպքում Հիմնադրամի յուրաքանչյուր մասնակից պետություն ունի ԿԶԵՀ-ի կապիտալում այն չափով լրացուցիչ ներդրման համար լրացուցիչ բաժանորդագրության նախապատվության իրավունք, որը համամասն է անմիջապես ավելացումից առաջ կապիտալում այդ պետությանը պատկանող մասնաբաժնին:

Հիմնադրամի մասնակից պետությունները պարտավոր չեն մասնակցել լրացուցիչ բաժանորդագրությանը: Նրանցից որեւէ մեկի կողմից լրացուցիչ բաժանորդագրության նախապատվության իրավունքից ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու դեպքում այն բաժանորդագրությունից հայտարարված կապիտալի մասի բաշխումը, որից հրաժարվել է Հիմնադրամի մասնակից պետությունը, իրականացվում է Կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ Հիմնադրամի մեկ կամ մի քանի մասնակից պետություններին վերաբաշխման (բաժանորդագրության գումարի ավելացման) միջոցով, նրանց խնդրանքով կամ Կառավարիչների խորհրդի որոշմամբ նախատեսված այլ ձեւով: Հիմնադրամի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքից հրաժարվելու դեպքում Կառավարիչների խորհուրդն ընդունում է լրացուցիչ բաժանորդագրության շրջանակներում լրացուցիչ ներդրման չափը նվազեցնելու մասին որոշում:

6. Կապիտալում կատարվող ներդրումների առնչությամբ կիրառվում են հետեւյալ դրույթները՝

1) ներդրում կատարելու մասին որոշումն ընդունելու պահին Հիմնադրամի մասնակից պետությունը Կառավարիչների խորհրդին ծանուցում է վճարման արժույթի մասին՝ հաշվի առնելով սույն Կանոնադրության 8-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները.

2) Հիմնադրամի մասնակից պետության կատարած յուրաքանչյուր ներդրում պետք է կազմի այնպիսի գումար, որը Կառավարիչների խորհուրդը

կորոշի՝ որպես ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորով արտահայտված կատարվող ներդրման գումարին համարժեք.

3) եթե վճարված արժույթների՝ ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորներով արտահայտված արժեքը նվազել է, ապա այդ արժույթները ԿԶԵՀ-ի կապիտալ վճարած Հիմնադրամի մասնակից պետությունը ԿԶԵՀ-ին է վճարում այդ արժույթներով լրացուցիչ գումար, որն անհրաժեշտ է ԿԶԵՀ-ի կապիտալում այդ արժույթներով Հիմնադրամի մասնակից պետության վճարած ներդրումների բոլոր գումարների արժեքները պահպանելու համար՝ Կառավարիչների խորհրդի կողմից հաստատվող կարգին համապատասխան.

4) եթե վճարված արժույթների՝ ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորներով արտահայտված արժեքն ավելացել է, ապա այդ արժույթները ԿԶԵՀ-ի կապիտալ վճարած Հիմնադրամի մասնակից պետությանը ԿԶԵՀ-ը վճարում է այդ արժույթներով գումար, որն անհրաժեշտ է ԿԶԵՀ-ի կապիտալում այդ արժույթներով վճարած ներդրումների բոլոր գումարների արժեքները ճշգրտելու համար՝ Կառավարիչների խորհրդի կողմից հաստատվող կարգին համապատասխան.

5) ԿԶԵՀ-ը կարող է հրաժարվել վճարում ստանալու իր իրավունքներից՝ սույն կետի 3-րդ ենթակետին համապատասխան, իսկ Հիմնադրամի մասնակից պետությունը կարող է հրաժարվել վճարում ստանալու իր իրավունքներից՝ սույն կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ Կառավարիչների խորհրդի կողմից հաստատվող կարգին համապատասխան.

6) ԿԶԵՀ-ը Հիմնադրամի ցանկացած մասնակից պետությունից կարող է ընդունել Հիմնադրամի այդ մասնակից պետության կառավարության կողմից թողարկված հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակներ՝ որպես 3-րդ ենթակետին համապատասխան այդ արժույթներով վճարում՝ պայմանով, որ այդ միջոցները ԿԶԵՀ-ին անհրաժեշտ չեն Գործառնական գործունեության իրականացման համար: ԿԶԵՀ-ը Հիմնադրամի մասնակից պետությանը կարող է փոխանցել Հիմնադրամի այդ մասնակից պետության կառավարության կողմից

թողարկված հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակներ՝ որպես սույն կետի 4-րդ ենթակետին համապատասխան այդ արժույթներով վճարում:

7. Կառավարիչների խորհուրդը Հիմնադրամի մասնակից պետությունների կատարած ներդրումների չափը վերանայում է 5 (հինգ) տարին առնվազն մեկ անգամ: Հիմնադրամի բոլոր մասնակից պետությունները պետք է ունենան ԿԶԵՀ-ի կապիտալում ներդրումներ կատարելու հավասար հնարավորություն՝ Կառավարիչների խորհրդի կողմից սահմանված պայմաններով:

8. ԿԶԵՀ-ում կատարվող ներդրումները չեն կարող պայմանավորված լինել դրանց օգտագործման որեւէ ուղղությամբ, ԿԶԵՀ-ի միջոցներն ստացողով կամ ԿԶԵՀ-ի նախագծով, եթե Կառավարիչների խորհրդի կողմից այլ որոշում չընդունվի:

Գլուխ 4. ԿԶԵՀ-ի ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. ԿԶԵՀ-ի գործառնական գործունեությունը

1. ԿԶԵՀ-ն իր գործունեությունն իրականացնում է Պայմանագրին եւ սույն Կանոնադրությանը համապատասխան: Իր նպատակի իրագործման համար ԿԶԵՀ-ն իրավասու է իրականացնելու հետեւյալ գործառնական գործունեությունը (այսուհետ՝ Գործառնական գործունեություն)՝

1) Հիմնադրամի մասնակից պետություններին հատուցելի հիմունքով ֆինանսական միջոցների տրամադրում.

2) սույն Կանոնադրության 6-րդ հոդվածի համաձայն ձեւավորված հիմնադրամներից ֆինանսական միջոցների տրամադրում, այդ թվում՝ անհատույց հիմունքով.

3) Հիմնադրամի մասնակից պետությունների եւ Հիմնադրամին

չմասնակցող պետությունների համար ԿԶԵՀ-ի նպատակին եւ գործառույթներին համապատասխանող խորհրդատվական եւ վերլուծական ծառայությունների տրամադրում.

4) Կառավարիչների խորհրդի որոշմամբ այլ գործառնությունների կատարում, որոնք համապատասխանում են Պայմանագրով եւ սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակին եւ գործառույթներին:

2. ԿԶԵՀ-ն իրականացնում է Հիմնադրամի մասնակից պետությունների տնտեսական եւ ֆինանսական կայունության մոնիթորինգ: Հիմնադրամի մասնակից յուրաքանչյուր պետություն Հիմնադրամին տրամադրում է տեղեկատվություն, որի ցանկը հաստատվում է Կառավարիչների խորհրդի կողմից, եւ Հիմնադրամի մասնակից պետության հետ համաձայնեցմամբ՝ ԿԶԵՀ-ի հետ անցկացնում է կանոնավոր խորհրդատվություններ:

3. ԿԶԵՀ-ի ռեսուրսները եւ միջոցներն օգտագործվում են բացառապես Հիմնադրամի մասնակից ինքնիշխան պետությունների հետ Գործառնական գործունեության համար՝ բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի: Նշված դեպքում Հիմնադրամի մասնակից պետություն չհանդիսացող ինքնիշխան պետությանը խորհրդատվական եւ վերլուծական ծառայությունների տրամադրման հարցը ներկայացվում է Կառավարիչների խորհրդի որոշմանը:

4. ԿԶԵՀ-ի գործունեությունը պետք է իրականացվի թափանցիկության, ռացիոնալ ֆինանսական կառավարման եւ ռիսկերի կառավարման սկզբունքների պահպանմամբ:

5. ԿԶԵՀ-ը ֆինանսական ռեսուրսներ է տրամադրում սույն հոդվածի 1-ին կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված Գործառնական գործունեության իրականացման համար՝ Կառավարիչների խորհրդի կողմից սահմանված պայմաններով: Ընդ որում, ԿԶԵՀ-ը չի առաջադրում որեւէ պայման առ այն, որ ֆինանսական միջոցներն ստացող պետությունների կողմից դրանք օգտագործվեն Հիմնադրամի մասնակից որեւէ կոնկրետ պետության կամ Հիմնադրամի

մասնակից պետությունների տարածքում:

6. ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորը կարող է կիրառվել սույն հոդվածում նշված Գործառնական գործունեության մեջ՝ Կառավարիչների խորհրդի կողմից սահմանված պայմաններով:

7. ԿԶԵՀ-ն ապահովում է Հիմնադրամի մասնակից պետությունների օգտին իրականացվող ցանկացած Գործառնական գործունեությունից ստացվող մուտքերի նպատակային օգտագործումը:

8. ԿԶԵՀ-ը կնքում է արժույթների, ինչպես նաև արտարժույթով արտահայտված իրավունքների (պահանջների) առուվաճառքի գործարքներ:

9. ԿԶԵՀ-ը միջոցներ չի ներգրավում միջազգային եւ ազգային ֆինանսական շուկաներում եւ չի մասնակցում կազմակերպությունների կապիտալին:

10. ԿԶԵՀ-ի Կառավարիչների խորհուրդը, Տնօրենների խորհուրդը, Ղեկավար տնօրենը եւ Վարչությունը (այսուհետ՝ ԿԶԵՀ-ի կառավարման մարմիններ) ապահովում են Գործառնական գործունեության իրականացման ստանդարտները, սկզբունքներն ու ընթացակարգերը կանոնակարգող փաստաթղթերի ընդունումը: ԿԶԵՀ-ն ապահովում է իր Գործառնական գործունեության համապատասխանությունը ԿԶԵՀ-ի փաստաթղթերին, որոնք հաստատվել են ԿԶԵՀ-ի համապատասխան կառավարման մարմինների կողմից:

11. Հիմնադրամն իր գործունեության մեջ ձգտում է համապատասխանել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում լավագույն համաշխարհային գործելակերպին:

12. ԿԶԵՀ-ը հավատարիմ է կայուն զարգացման սկզբունքներին եւ պատշաճ ուշադրություն է դարձնում սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ ֆինանսավորվող գործառնությունների էկոլոգիական եւ սոցիալական գնահատմանը: ԿԶԵՀ-ը չի ընդունում եւ արգելում է մանկական աշխատանքի օգտագործումը ԿԶԵՀ-ից ստացված միջոցների հաշվին ֆինանսավորվող արտադրություններում, ինչպես

նաեւ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ֆինանսավորում ծխախոտային եւ ալկոհոլային արտադրանքի արտադրությունը, ռազմատեխնիկական միջոցների եւ կրկնակի կիրառման արտադրանքի մշակումը, արտադրությունը, նորոգումը եւ սպասարկումը, ինչպես նաեւ էկոլոգիային, բնակչության առողջությանը եւ անվտանգությանը էական վնաս հասցնող արտադրությունները:

Հոդված 11. Վնասների ծածկումը

1. ԿԶԵՀ-ի նկատմամբ տրամադրված ֆինանսական միջոցների մասով ժամկետանց պարտքի կամ պարտավորությունները չկատարելու դեպքում ԿԶԵՀ-ը ձեռնարկում է գործողություններ, որոնք անհրաժեշտ է համարում՝ հնարավոր վնասները ծածկելու համար:

2. ԿԶԵՀ-ի գործառնությունների մասով վնասները վերաբերում են՝

1) առաջին հերթին՝ մաքուր շահույթին.

2) երկրորդ հերթին՝ պահուստային հիմնադրամին եւ չբաշխված շահույթին.

եւ

3) երրորդ հերթին՝ կապիտալին:

Գլուխ 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 12. Կառավարման մարմինների կառուցվածքը

1. ԿԶԵՀ-ի կառավարումն իրականացնում են Կառավարիչների խորհուրդը, Տնօրենների խորհուրդը, Ղեկավար տնօրենը եւ Վարչությունը:

2. Կառավարիչների խորհուրդը, Տնօրենների խորհուրդը, Ղեկավար տնօրենը եւ Վարչությունը ԿԶԵՀ-ի գործունեությունն ապահովելու համար իրավունք ունեն իրենց լիազորությունների սահմաններում ընդունելու ցանկացած քաղաքականություն, դրույթ, կանոն եւ ընթացակարգ, ինչպես նաեւ ստեղծելու

ԿԶԵՀ-ի կառավարման մարմիններ չհանդիսացող ցանկացած օժանդակ մարմին (կոմիտեներ եւ հանձնաժողովներ):

Հոդված 13. Ընդհանուր դրույթներ Կառավարիչների խորհրդի վերաբերյալ

1. ԿԶԵՀ-ի կառավարման բարձրագույն մարմինը Կառավարիչների խորհուրդն է:

2. Կառավարիչների խորհուրդն իր պարտականությունները կատարում է որպես մարմին, որի անդամները մշտապես չեն գտնվում ԿԶԵՀ-ի գլխավոր գրասենյակի տեղակայման վայրում:

3. Հիմնադրամի մասնակից յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ներկայացված լինելու Կառավարիչների խորհրդում: Կառավարիչների խորհրդի կազմում ընդգրկվում են Հիմնադրամի մասնակից յուրաքանչյուր պետությունից մեկական կառավարիչ եւ նրա մեկական տեղակալ:

4. Կառավարիչների խորհրդում Հիմնադրամի մասնակից պետությունից կառավարիչը Հիմնադրամի մասնակից այդ պետության ֆինանսների նախարարն է (պետական ֆինանսների կառավարման ոլորտում լիազորված մարմնի ղեկավարը): Յուրաքանչյուր կառավարիչ նշանակում է իր տեղակալին (եւ այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է ԿԶԵՀ-ին): Կառավարիչների խորհրդի նիստում Հիմնադրամի մասնակից պետությունից կառավարչի բացակայության դեպքում նրա տեղակալը լիազորված է գործելու կառավարչի անունից, այդ թվում՝ մասնակցելու քվեարկությանը:

5. Կառավարիչների խորհուրդը յուրաքանչյուր տարի Հիմնադրամի մասնակից պետությունից կառավարիչներից որեւէ մեկի ընտրում է որպես Կառավարիչների խորհրդի նախագահ, որն իր պարտականությունները կատարում է մինչեւ Կառավարիչների խորհրդի հաջորդ նախագահի ընտրվելը:

6. Կառավարիչը Կառավարիչների խորհրդում քվեարկում է Հիմնադրամի մասնակից այն պետության անունից, որը նա ներկայացնում է: Կառավարչի տեղակալը Հիմնադրամի մասնակից պետության անունից քվեարկում է միայն կառավարչի բացակայության դեպքում:

7. Կառավարիչների խորհրդում քվեարկելու նպատակով Հիմնադրամի մասնակից յուրաքանչյուր պետության տրվում է մեկ ձայնի իրավունք՝ ԿԶԵՀ-ի յուրաքանչյուր ամբողջական 100000 (հարյուր հազար) հաշվարկային միավորի համար՝ Հիմնադրամի մասնակից պետության կողմից ԿԶԵՀ-ի կապիտալում կատարած դրամական ներդրման գումարի չափով: Կառավարիչների խորհրդում Հիմնադրամի մասնակից պետության ձայների քանակի հաշվարկման համար ներդրման չափը որոշելիս հաշվի չեն առնվում չվճարված մուրհակները:

8. Կառավարիչների խորհրդի՝ բոլոր հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են տրված ձայների պարզ մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնադրությամբ:

9. Սույն Կանոնադրության 14-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Հիմնադրամի մասնակից պետությունների կողմից կապիտալում կատարված ներդրումների չափի գումարի 90 (իննսուն) տոկոսը ներկայացնող ձայների առկայության դեպքում եւ հաշվի առնելով սույն հոդվածի 7-րդ կետի դրույթները: ԿԶԵՀ-ում մասնակցության կասեցման մասին որոշում ընդունելու դեպքում քվեարկության արդյունքները որոշելիս հաշվի չեն առնվում Հիմնադրամի մասնակից այն պետության ձայները, որի մասնակցության կասեցման մասին որոշում է ընդունվում:

10. Կառավարիչների խորհուրդն իր հայեցողությամբ, սակայն ոչ պակաս, քան տարին 2 անգամ, անցկացնում է նիստեր, որոնք գումարվում են Կառավարիչների խորհրդի նախագահի կողմից: Տնօրենների խորհուրդը եւ Ղեկավար տնօրենը կարող են Կառավարիչների խորհրդի նախագահին ներկայացնել Կառավարիչների խորհրդի նիստ գումարելու մասին առաջարկ:

11. Կառավարիչների խորհուրդն իրավունք ունի ընդունելու որոշումներ՝ Կառավարիչների խորհրդի անդամների հեռակա գրավոր հարցման միջոցով (հեռակա քվեարկություն):

12. Կառավարիչների խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ Կառավարիչների խորհրդում քվեարկության ժամանակ ձայների առնվազն 90 (իննսուն) տոկոսը ներկայացնող կառավարիչների առկայության դեպքում:

13. Կառավարիչների խորհուրդն առաջին նիստում հաստատում է իր գործունեության վերաբերյալ հիմնադրույթը, որով կանոնակարգվում է դրա աշխատակարգը:

14. Կառավարիչների խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց ԿԶԵՀ-ից վարձատրություն ստանալու:

Հոդված 14. Կառավարիչների խորհրդի լիազորությունները

1. Կառավարիչների խորհուրդն ունի ԿԶԵՀ-ի գործունեության հետ կապված ցանկացած հարցի քննարկման եւ լուծման լիազորություններ՝ սույն Կանոնադրությանը եւ Պայմանագրին համապատասխան:

2. Կառավարիչների խորհուրդը կարող է Տնօրենների խորհրդին եւ Վարչությանը պատվիրակել իր լիազորությունները՝ բացառությամբ հետեւյալների՝

1) ԿԶԵՀ-ում Հիմնադրամի մասնակից նոր պետությունների ընդունումը եւ դրանց ընդունման պայմանների սահմանումը.

2) ԿԶԵՀ-ի կապիտալի ավելացման կամ պակասեցման մասին որոշումը.

3) ԿԶԵՀ-ում Հիմնադրամի մասնակից պետության մասնակցության կասեցումը.

4) Հիմնադրամի մասնակից պետություններին Պայմանագրի եւ սույն Կանոնադրության մեկնաբանման վերաբերյալ առաջարկների ներկայացումը.

- 5) Ղեկավար տնօրենին պաշտոնի նշանակելը եւ պաշտոնից ազատելը.
- 6) Ղեկավար տնօրենի ներկայացմամբ Ղեկավար տնօրենի տեղակալների եւ Վարչության անդամների թեկնածությունների հաստատումը.
- 7) Հիմնադրամի մասնակից պետությունների միջեւ ԿԶԵՀ-ի կապիտալում կատարված ներդրումների գումարների վերաբաշխումը՝ լրացուցիչ բաժանորդագրությամբ.
- 8) ԿԶԵՀ-ի արտաքին աուդիտորի ընտրության հաստատումը.
- 9) ԿԶԵՀ-ի մաքուր շահույթի բաշխումը, պահուստների չափի որոշումը.
- 10) սույն Կանոնադրության 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված Գործառնական գործունեության իրականացման մասով Հիմնադրամի մասնակից պետությունների միջեւ հասանելիության սահմանաչափերի բաշխումը.
- 11) Գործառնական գործունեությունը կարգավորող քաղաքականությունների հաստատումը.
- 12) սույն Կանոնադրության 10-րդ հոդվածով կանոնակարգված գործունեությանը համապատասխան՝ ԿԶԵՀ-ի 100 000 000 (հարյուր միլիոն) հաշվարկային միավորին համարժեք գումարը գերազանցող չափով Հիմնադրամի մասնակից պետություններին տրամադրվող առանձին գործառնությունների հաստատումը.
- 13) Հիմնադրամի մասնակից պետություններին Պայմանագրի եւ սույն Կանոնադրության փոփոխման վերաբերյալ առաջարկների ներկայացումը.
- 14) ԿԶԵՀ-ի ռազմավարության հաստատումը.
- 15) ԿԶԵՀ-ի գործունեության կասեցման եւ ԿԶԵՀ-ի գործունեության վերջնական դադարեցման ու դրա ռեսուրսների բաշխման մասին որոշման ընդունումը.
- 16) ԿԶԵՀ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների,

տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը՝ հաշվի առնելով արտաքին աուդիտորի աուդիտորական եզրակացությունը.

17) ԿԶԵՀ-ի ներկայացուցչություններ բացելու ու փակելու եւ ԿԶԵՀ-ի գլխավոր գրասենյակի գտնվելու վայրը փոխելու մասին որոշման ընդունումը.

18) ԿԶԵՀ-ի կազմակերպական կառուցվածքի հաստատումը՝ մինչեւ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակը.

19) ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորի կամ ԿԶԵՀ-ում կատարվող ներդրումների անվանական արժեքը որոշելու համար արժույթի հաստատումը.

20) ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորի կառուցվածքի, դրա արժեքի ու հաշվարկման կարգի հաստատումը.

21) ԿԶԵՀ-ի միջոցներում Հիմնադրամի մասնակից պետության մասնաբաժնի որոշումը՝ Հիմնադրամի մասնակից պետությունների կազմից դուրս գալու դեպքում այն վերադարձնելու նպատակով.

22) ԿԶԵՀ-ին կատարվող նվիրատվությունների ընդունումը.

23) Կառավարիչների խորհրդի աշխատանքի կանոնների եւ ընթացակարգերի սահմանումը.

24) Տնօրենների խորհրդի ու Վարչության աշխատանքի կանոնների եւ ընթացակարգերի սահմանումը.

25) պահուստային եւ այլ հիմնադրամների ձեւավորման, կառավարման եւ օգտագործման կարգի եւ պայմանների հաստատումը:

3. Կառավարիչների խորհուրդը կարող է իր լիազորությունները պատվիրակել Տնօրենների խորհրդին, Ղեկավար տնօրենին եւ Վարչությանը, սակայն պահպանում է նախկինում պատվիրակված ցանկացած լիազորություն չեղարկելու, սահմանափակելու կամ վերանայելու իրավունքը:

Հոդված 15. Տնօրենների խորհուրդը

1. Տնօրենների խորհուրդը ԿԶԵՀ-ի կառավարման կոլեգիալ մարմին է, որն իրականացնում է դրա գործունեության ընդհանուր ղեկավարումը եւ հաշվետու է Կառավարիչների խորհրդին:

2. Կառավարիչներից յուրաքանչյուրը Տնօրենների խորհրդում նշանակում է մեկ տնօրեն՝ ֆինանսների նախարարության (պետական ֆինանսների կառավարման ոլորտում լիազորված մարմնի) աշխատակիցների թվից, եւ այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է ԿԶԵՀ-ին: Տնօրենների խորհրդի կազմը հաստատվում է Կառավարիչների խորհրդի նախագահի կողմից:

3. Տնօրենների խորհրդի անդամները պետք է բարեխղճորեն եւ պատշաճ զգուշավորությամբ կատարեն իրենց վրա դրված պարտականություններն ու գործեն ի շահ ԿԶԵՀ-ի:

4. Տնօրենների խորհրդի նախագահը Կառավարիչների խորհրդում նախագահող՝ Հիմնադրամի մասնակից պետությունից տնօրենն է:

5. Տնօրենների խորհրդի անդամները ԿԶԵՀ-ի աշխատակիցներ չեն եւ վարձատրություն չեն ստանում ԿԶԵՀ-ից:

6. Տնօրենների խորհրդի անդամները շարունակում են պաշտոնավարել այնքան ժամանակ, քանի դեռ նրանց փոխարինողները չեն նշանակվել եւ չեն սկսել իրենց պարտականությունների կատարումը:

7. Տնօրենների խորհուրդն իր նիստերն անցկացնում է ըստ անհրաժեշտության՝ կախված ԿԶԵՀ-ի գործունեության հետ կապված հարցերից, սակայն տարին առնվազն 2 անգամ: Տնօրենների խորհուրդն իր պարտավորությունները կատարում է որպես մարմին, որի անդամները մշտապես չեն գտնվում ԿԶԵՀ-ի գլխավոր գրասենյակի տեղակայման վայրում: Նիստերը կարող են գումարվել Տնօրենների խորհրդի նախագահի կողմից եւ Տնօրենների խորհրդի անդամներին ու Ղեկավար տնօրենի առաջարկությամբ:

8. Տնօրենների խորհուրդն իրավունք ունի ընդունելու որոշումներ՝ Տնօրենների խորհրդի անդամների հեռակա գրավոր հարցման միջոցով (հեռակա քվեարկություն):

9. Տնօրենների խորհրդում քվեարկելու նպատակով յուրաքանչյուր տնօրենի տրվում է մեկ ձայնի իրավունք՝ ԿԶԵՀ-ի յուրաքանչյուր ամբողջական 100000 (հարյուր հազար) հաշվարկային միավորի համար՝ Հիմնադրամի մասնակից պետության կողմից ԿԶԵՀ-ում կատարված դրամական ներդրման գումարի չափով: Տնօրենների խորհրդում Հիմնադրամի մասնակից պետության ձայների քանակի հաշվարկման համար ներդրման չափը որոշելիս հաշվի չեն առնվում չվճարված մուրհակները:

10. Տնօրենների խորհրդի նիստը համարվում է իրավագործ՝ Տնօրենների խորհրդում քվեարկության ժամանակ ձայների առնվազն 90 (իննսուն) տոկոսը ներկայացնող՝ Տնօրենների խորհրդի անդամների առկայության դեպքում:

11. Եթե Տնօրենների խորհրդին լիազորություններ պատվիրակելիս սույն Կանոնադրությամբ կամ Կառավարիչների խորհրդի կողմից ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա Տնօրենների խորհրդի կողմից քննարկվող բոլոր հարցերը լուծվում են ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ, որը տնօրինում են քվեարկությանը մասնակցող՝ Տնօրենների խորհրդի անդամները:

Հոդված 16. Տնօրենների խորհրդի լիազորությունները

Տնօրենների խորհուրդն ապահովում է ԿԶԵՀ-ի գործունեության ընդհանուր ղեկավարումը եւ այդ նպատակով իրականացնում է Կառավարիչների խորհրդի կողմից իրեն պատվիրակված, ինչպես նաեւ սույն Կանոնադրությամբ նախատեսված լիազորությունները եւ մասնավորապես՝

- 1) Կառավարիչների խորհրդի քննարկմանը ներկայացվող նյութերը

նախնական հավանության արժանացնելը.

2) Կառավարիչների խորհրդի կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում ԿԶԵՀ-ի փաստաթղթերի հաստատումը եւ այդ փաստաթղթերի կիրառման բացառությունների կամ բացառումների տրամադրումը.

3) ԿԶԵՀ-ի գործունեության վերաբերյալ Վարչության կանոնավոր հաշվետվությունների ուսումնասիրումն ու համապատասխան միջոցների ձեռնարկումը.

4) Տնօրենների խորհրդի կոմիտեների ստեղծումը եւ նշված կոմիտեների լիազորությունների սահմանումը.

5) արտաքին աուդիտորի ընտրությունը եւ ֆինանսական տարվա արդյունքներով աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունը հավանության արժանացնելը.

6) ԿԶԵՀ-ի ռազմավարությունը հավանության արժանացնելը՝ նախքան Կառավարիչների խորհրդի կողմից դրա հաստատումը.

7) նախքան Կառավարիչների խորհրդի որոշումն ընդունելը՝ ԿԶԵՀ-ի նոր գործառնությունների ժամանակավոր կասեցումը՝ միաժամանակ տվյալ հարցը ներկայացնելով Կառավարիչների խորհրդի քննարկմանը.

8) Կառավարիչների խորհրդի կողմից պատվիրակված այլ լիազորությունների իրականացումը:

Հոդված 17. ԿԶԵՀ-ի Ղեկավար տնօրենը,

Վարչությունը եւ աշխատակիցները

1. Ղեկավար տնօրենը ղեկավարում է Հիմնադրամի գործունեությունը եւ Վարչությունը, ԿԶԵՀ-ի գործունեության հետ կապված բոլոր հարցերով դրա պաշտոնական ներկայացուցիչն է եւ երրորդ անձանց հետ հարաբերություններում

գործում է ԿԶԵՀ-ի անունից՝ առանց լիազորագրի:

2. Ղեկավար տնօրենին եւ նրա տեղակալներին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է Կառավարիչների խորհուրդը: Ղեկավար տնօրենը Կառավարիչների խորհրդի, Տնօրենների խորհրդի կազմում չի կարող միաժամանակ զբաղեցնել կառավարչի կամ նրա տեղակալի պաշտոնը:

3. Ղեկավար տնօրենի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Ղեկավար տնօրենի նշանակած տեղակալը: Ղեկավար տնօրենի կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Կառավարիչների խորհրդի նախագահի որոշմամբ նշանակված՝ Ղեկավար տնօրենի տեղակալն իրականացնում է Ղեկավար տնօրենի լիազորություններն ու կատարում է նրա գործառույթները:

4. Ղեկավար տնօրենն իր պաշտոնում հաստատվում է 5 (հինգ) տարով եւ կարող է վերանշանակվել նոր ժամկետով:

5. Ղեկավար տնօրենը հաշվետու է Կառավարիչների խորհրդին: Ղեկավար տնօրենը Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի նիստերին մասնակցում է առանց ձայնի իրավունքի:

6. Վարչությունը ԿԶԵՀ-ի մշտապես գործող կոլեգիալ գործադիր մարմին է, որը հաշվետու է Տնօրենների խորհրդին ու Կառավարիչների խորհրդին եւ կազմված է Ղեկավար տնօրենից, նրա տեղակալներից եւ Վարչության անդամներից: Վարչության թվակազմը որոշվում է Կառավարիչների խորհրդի կողմից: Ղեկավար տնօրենի ներկայացմամբ՝ Կառավարիչների խորհուրդը կարող է որոշում ընդունել Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին Վարչության կազմի մեջ ընդգրկելու մասին: Վարչության հիմնական խնդիրն է ԿԶԵՀ-ի գործունեության իրականացումը՝ Պայմանագրին, սույն Կանոնադրությանը, Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի որոշումներին համապատասխան:

7. Վարչության անդամների միջեւ պարտականությունների բաշխումն

իրականացնում է Ղեկավար տնօրենը: Ղեկավար տնօրենի տեղակալներն ու Վարչության մյուս անդամները ղեկավարում են ԿԶԵՀ-ի գործունեության առանձին ուղղությունները եւ հաշվետու են Ղեկավար տնօրենին:

8. Վարչության նիստում որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Որոշումներ ընդունելիս Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում Ղեկավար տնօրենի ձայնը որոշիչ է:

9. Ղեկավար տնօրենը, Ղեկավար տնօրենի տեղակալներն ու Վարչության անդամները նշանակվում են Հիմնադրամի մասնակից պետությունների քաղաքացիների թվից:

10. Եթե Կառավարիչների խորհրդի կողմից այլ բան նախատեսված չէ, ապա Ղեկավար տնօրենի իրավասությանը վերապահվում են հետեւյալ հարցերը՝

1) ԿԶԵՀ-ի աշխատանքի կազմակերպումը, ԿԶԵՀ-ի գույքի եւ ակտիվների կառավարումը՝ սույն Կանոնադրությանը, Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի որոշումներին համապատասխան.

2) Վարչության աշխատանքի ապահովումը.

3) Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի որոշումների կատարման ապահովումը.

4) ներկայացուցչությունը ԿԶԵՀ-ի անունից, ինչպես նաեւ դատարանում եւ արբիտրաժում ԿԶԵՀ-ի անունից նախապահանջներ եւ հայցեր ներկայացնելը.

5) ԿԶԵՀ-ի գործունեության հետ կապված հարցերով հրամաններ արձակելը եւ որոշումներ ընդունելը՝ Ղեկավար տնօրենի եւ Վարչության լիազորությունների շրջանակներում.

6) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը եւ ԿԶԵՀ-ի բյուջեին ու հաստիքացուցակին համապատասխան աշխատավարձի, ինչպես նաեւ աչքի ընկած աշխատակիցների խրախուսման չափերը սահմանելը.

7) ԿԶԵՀ-ի անունից (առանց լիազորագրի) գործառնությունների եւ գործարքների կատարումը.

8) Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում ԿԶԵՀ-ի փաստաթղթերի հաստատումը.

9) Հիմնադրամի անձնակազմի ղեկավարումը, ԿԶԵՀ-ի աշխատակիցներին աշխատանքի ընդունելը եւ աշխատանքից ազատելը՝ բացառությամբ Կառավարիչների խորհրդի կողմից նշանակվող՝ Ղեկավար տնօրենի տեղակալների, ԿԶԵՀ-ի աշխատակիցների պաշտոնեական պարտականությունների սահմանումը.

10) ԿԶԵՀ-ի աշխատակիցներին ԿԶԵՀ-ի անունից հանդես գալու եւ գործարքներ կնքելու լիազորություններ տրամադրելը, նրանց ԿԶԵՀ-ի անունից լիազորագրեր տալը.

11) Կառավարիչների խորհուրդ Ղեկավար տնօրենի տեղակալների նշանակման, ներքին աուդիտի ծառայության անձնակազմի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելը.

12) այլ լիազորությունների իրականացումը՝ բացառությամբ Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահվող լիազորությունների:

11. Եթե Կառավարիչների խորհրդի կողմից այլ բան նախատեսված չէ, ապա Վարչության իրավասությանը վերապահվում են հետեւյալ հարցերը՝

1) ԿԶԵՀ-ի ռազմավարության, Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի կողմից ընդունված այլ փաստաթղթերի եւ որոշումների իրագործումը.

2) Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի քննարկմանը ներկայացվող նյութերի եւ առաջարկների պատրաստումը.

3) Հիմնադրամի գործառնությունների կանոնների եւ ընթացակարգերի

հաստատումը.

4) ԿԶԵՀ-ի գործունեության ծրագրերի պատրաստումը.

5) ԿԶԵՀ-ի նախագծերի եւ ծրագրերի փորձաքննության կազմակերպումը.

6) ԿԶԵՀ-ի ռեսուրսային ներուժի բավարար լինելու գնահատումը, նախագծերի ֆինանսավորման առաջնահերթությանը վերաբերող առաջարկների պատրաստումը.

7) սույն Կանոնադրությամբ եւ Կառավարիչների խորհրդի որոշումներով սահմանված լիազորությունների շրջանակներում՝ սույն Կանոնադրության 10-րդ հոդվածով կանոնակարգված գործունեությանը համապատասխան Հիմնադրամի մասնակից պետություններին տրամադրվող գործառնությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

8) Հիմնադրամի մասնակիցների ռեստորի վարումը.

9) այլ լիազորությունների իրականացումը՝ Կառավարիչների խորհրդի եւ Տնօրենների խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերին եւ որոշումներին համապատասխան:

12. Վարչության նիստի անցկացման համար քվորումը կազմում է Վարչության անդամների թվի պարզ մեծամասնությունը:

**ԳԼՈՒԽ 6. ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ,
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԿԶԵՀ-Ի ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

**Հոդված 18. ԿԶԵՀ-ից Հիմնադրամի մասնակից պետության դուրս գալը,
ԿԶԵՀ-ում մասնակցության կասեցումը**

1. Հիմնադրամի ցանկացած մասնակից պետություն իրավունք ունի դուրս

գալու ԿԶԵՀ-ից՝ իր մտադրության մասին գրավոր ծանուցելով Կառավարիչների խորհրդին: Այդ գրավոր ծանուցումն ուղարկվում է Կառավարիչների խորհրդի նախագահին, պատճենները՝ Տնօրենների խորհրդի նախագահին եւ Ղեկավար տնօրենին, եւ այդ մասին Ղեկավար տնօրենի միջոցով անմիջապես տեղեկացվում են Հիմնադրամի մասնակից պետությունները:

2. Կառավարիչների խորհրդի նախագահի կողմից ԿԶԵՀ-ից դուրս գալու մասին նշված ծանուցումն ստանալու օրվանից՝

1) Պայմանագրին եւ սույն Կանոնադրությանը համապատասխան՝ Հիմնադրամի այդ մասնակից պետությանը տրված բոլոր իրավունքները, բացառությամբ ԿԶԵՀ-ի կազմից դուրս գալու իրավունքի, կասեցվում են,

